

Գ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն (*)

Վշտակիր հոգեւոր եղբայրներ ու սգակիր հաւատացեալներ,
Մահուան ցուրտ նուագը կու գայ ուժգնօրէն փոթորկելու մեր հոգին ու նոր
արցունքներ խլելու մեր աչքերէն, մեր սրտի խորերէն: Ան կու գայ զաղբեցնելու
երգը ծովուն, երգը աստղերուն, ու խորտակելու պողպատեայ կամփը մարդուն:

Մահաշունչ ժամին, իր հարուածով ուժգին, եկեր մարեր է ճրագը մեր սիրե-
ցեալ Պատրիարքի արեւ կեանքին ու սուգի սեւ շղարշով ծածկեր գահը արժանընտիր
մեր Գահակալին:

Ոչ ևս է Հայ եկեղեցւոյ արթուն պահակը, մեծ բեմբասացը, հայ գրի և գրպ-
րութեան անխռնջ սպասարկուն: Մարեր է հայ լեզուի, հայ հաւատքի ճարտար եր-
գիչին բոցավառ շունչն ու լոբը՝ անոր քաղցրալուս ձայնը: Ան այժմ մահուան քո-
ղէն կը նայի անմահութեան:

«Պոէտ, երէկ երգէ իր աշխոյժ ու կրակ, ինչպէ՞ս մնում ես սառ հոգերի տակ:
Մեծատաղանդ բանաստեղծը եղիվարդ իր եղեգնեայ գրչով կերտեր է լուսն ու
անցեր, իր շունչն ու ոգին թողելով դարերուն, հայ մարդերուն:

Տարիներու փոշիները պիտի չկարենան երբեք թաղել բազմավաստակ բանա-
ստեղծ գրագէտին կոթողական գործը: Դարերու մորիկները պիտի չկարենան երբեք
սրբել սիրուած, գնահատուած գրչին քաղցր և անմոռաց յիշատակը:

Պատրիարք Հայրը շունչ մըն էր թանկագին, որ սպասեցաւ տարիներու մեծ
ճիգէն, կեանքի մեծ պայքարէն:

Իր կեանքի վէպը, չափ մը հոգի պատմութիւնը՝ աւարտած անձնդիր մշակի
դամբարանը պիտի դառնայ անպայման ներշնչարանը գալիք հայ սերունդներուն:
Նորահաս հայ սերունդներ պիտի գան վաղը, եղիվարդի գրական անգաստանէն ներս
պարզելու իրենց մտքի ու հոգիի առագաստներն ու բանաստեղծի սակի բաժակէն
լմպելու ցեղին քաղցրութիւնները:

«Փառք նրան որ թողել է կեանքում յիշատակի կրակն»:

Մեծ այս կորուստին առիթով, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Նո-
րին Ս. Օձղութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին, ընդունեցէք, Բարձրապատիւ
Տեղապահ Սրբազան Հայր և երուսաղէմի ուխտեալ Միաբանութիւն, մեր խորագգած
վշտակցութիւններն ու սրտալից ցաւակցութիւնները:

Լոյս յաւիտենակա՞ն՝ վախճանեալ Պատրիարքի տառապակոծ հոգւոյն ու արեւ-
շատ, վարդաբոյր օրեր՝ լի ազգաշէն գործունէութեամբ, նուիրեալ, հաւատաւոր
Միաբանութեանդ:

(*) Երանաշնորհ եղիշէ Պատրիարքի յուզարկաւորութեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթո-
ղիկոսութիւնը ներկայացնող Գերշ. Տ. Սահակ Արքեպիսկ. Այվազեանի Հանգուցեալի շիրմին
արտասանուած այս խօսքը մեր ձեռքը ուշ հասած ըլլալուն՝ չկրցանք գնել իր տեղին: